ՀՆԱԴԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՐՄԱՎԻՐՈՒՄ*

Դ. Ա. ՏԻՐԱՅՅԱՆ

1971 թ. Արմավիրի պեղումները եղևան բերեցին միջնաբերդի ուրարտական, հին հայկական ու միջնադարյան ժամանակաշրջանի նոր նյութեր։ 1970 թ. բացված արևմտյան հին պարսպի մերձակայքում պեղված տարածքը լրացուցիչ տվյալներ հայթայթեց Արմավիրի՝ հատկապես հելլենիստական ժամանակաշրջանի պաամության ու մշակույթի վերաբերյալ, էլ ավելի ընդլայնելով մեր դիտելիքները տնտեսության տարբեր ճյուղերի՝ երկրագործության, մետաղագործության, խեցեգործության, ինչպես նաև առևտրական կապերի մասին։

Առանձնապես ուշադրության են արժանի ետուրարտական ժամանակաշրջանի հարտարապետական մնացորդները, որոնք վկայում են ամրոցում, հատկապես տվյալ հատվածում զարգացող բուռն կյանքի մասին։

Պեղված տեղամասի շերտերը վերևից իսկ թվագրվում են մ. թ. ա. III—I դդ., իսկ հյուսիսային քառակուսիներում (7D), ինչպես նաև գագաթի շենքի շրջապատում կան միջնադարյան մշակույթի հետքեր։

7D քառակուսում ուրարտական արևմտյան հին պարսպի անկյունային աշտարակի (ամրոցի մուտքի մոտ) անմիջական հարևանությամբ բացվեցին քառանկյունի սենյակի քարե պատերի մնացորդներ՝ սենյակը երկու մասի բաժանող միջնորմի հետքերով։ Միջնադարյան կացարանների հետքեր հանդիպեցին նաև բլուրի գագաթի շենքի հյուսիսային մասում։ Երկու տեղերում գտնված կավանոթները (երեքնուկաձև կամ կլոր բերանով, հասարակ ու նրբրախեցի միկանթանի սափորներ՝ վերևի մասը նեռկի հետքերով կամ զարդարված նեղ ակոսներից կազմված գոտիներով, խոհանոցային կճուճներ, ջնարակած թասերի բեկորներ), մետաղե առարկաները (մանգաղ, քրոնզե ասպարանջան), ապակե ապարանջանները, պղնձե դրամը վկայում են XI—XIII դդ. տեղիս բնակվածության մասին, և դա պատահական չէ, քանի որ Բագրատունիների ժամանակ հայկական պետականությունը վերականգնելուց հետո նպաստավոր պայմաններ ստեղծվեցին երկրի վտանգված դաշտավայրերում բնակվելու համար։ Ժողովուրդը կամ նրա մի մասը, որը մինչ այդ քաշվել էր նախալեռնային և լեռնային ավելի ապահով վայրերը, այժմ հնարավոր համարեց իջնել դաշտ, աստիճանաբար վերաբնակեցնելով քիչ թե շատ ապահով բլուրները։

Վերաբնակեցման հետքերը լավ երևում են Արարատյան դաշտի մի շարք բարձունքներում (Կարմիր բլուր, Մեծամոր, Դավթի բլուր), որտեղ կյանքը վաղուց դադարել էր, բայց այժմ վերականգնվում էր համեստ բնակավայրերի ձևով, որոնք անկասկած վկայում են երկրում և առաջին հերթին նրա հարթավայրերում ստեղծված նոր իրադրության մասին։

---

* Նախնական հաղորդում 1971 թ. պեղումների մասին։

Հին հայկական շերտը հիմնականում պեղվել է, ինչպես արդեն ասվեց, արևմտյան երկու պարիսպների միջև ընկած տարածությունում։ Մի քառակուսի էլ պեղվեց հին պարսպից ներս, նախորդ տարիներում բացված ուրարտական պատերի կազմած համալիրի հարավ-արևմտյան անկյունում։

7D քառակուսում (անկյունային աշտարակին կից) բացվել է արևելքից արևմուտք ձգվող անմշակ քարերից շարված պատի ներքնամասը (երկարությունը՝ 6 մ, բարձրությունը՝ 0,40 մ)։ Այն փաստորեն քառակուսին բաժանում էր երկու՝ հյուսիսային և հարավային հատվածների։ Ե՛վ այստեղ, և՛ այնտեղ պեղված նյութը միջնադարյան էր, սակայն հարավային մասում այն աստիճանաբար փոխվեց և վերոհիշյալ պատի հիմքերից ցած ընկած շերտերում արդեն լիովին անտիկ կերպար ուներ։ Այդ, անկասկած միջնադարյան պատի մնացորդներից ներքև, մոտ 0,50 մ խորությամբ վառված շերտում, բացվեցին մի շարք կավանոթներ և գտնվեցին բազմաթիվ մետաղե իրեր։ Նույն տեղում երևացին գետաքարերից և տոփանված կավից հատակի հետքեր։ Կավանոթների այդ խումբը բաղկացած էր բաց մոխրագույն, փոքր տափաշշից, անզարդ, բաց սրճագույն մեծ կոնքից (քրեղանատիպ խորը անոթ), սև մոխրագույն ճրագից ու գնդաձև պուլիկից, երեքնուկաձև բերանով սափորի և լայնաբերան կճուճի վերնամասերից, կիսագնդաձև գունազարդ ու անզարդ գավաթների, ըմպանակի, ինչպես նաև խոհանոցային անոթների բեկորներից։ Այստեղ գտնվեցին նաև մի ամբողջական կիսագնդաձև գունազարդ գավաթ և նման գավաթի բեկորներ, միկանթանի փոքր սափոր, թերի, բաց կանաչ անգոբի վրա կարմիր գույնի զարդերով, ճրագներ և այլն։ Նրանց հետ գտնված մետաղե առարկաներից հիշատակության արժանի են ուղիղ և կեռ սայր ունեցող դանակների բեկորները, վերևի մասերը գամերի հետքերով՝ փայտե դաստապանը միացնելու համար, դաստապանի բրոնզե թերթիկ-ծածկույթները՝ երկաթե գամերի հետքերով և այլն։

Անտիկ նման շերտից 0,30 մ ներքև բացվեցին ուրարտական պատի հիմքեր և ուրարտական խարիսխ, սակայն հնագիտական նյութը շարունակում էր անտիկ մնալ։ Ուրարտական պատի հիմքերին կից երևացին սյան (կտրվածքը՝ քառանկյունի 0,15 մ×0,15 մ) ածխացած մնացորդներ, իսկ նրանից մոտ 2 մ հեռավորության վրա սյան փոքր քառանկյունի տուֆից խարիսխ (0,43 մ× 0,37 մ×0,46 մ չափերով)։ Ուրարտական պատի ու խարսխի մակարդակին կամ ներքև գտնված իրերից պետք է հիշատակել երկաթե եռաթև պոչոսկտվոր նետասլաքը, գունազարդ պնակի ու կիսագնդաձև գավաթի, հնատիպ ջնարակած անոթների, ինչպես նաև ներմուծված նրբախեցի սրվակի և այլ անոթների բեկորները։ Այս և նախորդ տարում պեղված քառակուսու (7E) սահմանի վրա գտնվեց ծնկաչոք մարդ պատկերող կավե արձանիկի կեսը՝ հար ու նման 1970 թ. գտնված արձանիկի ներքնամասին[1]։

Միջնադարյան և ուրարտական պատերի միջև ընկած մոտ 1 մ հաստությամբ հողի կտրվածքում, ածխի բավականին լավ նշմարվող շերտում, հայտնաբերվեցին տապարաձև բերանով երկաթե գործիք (հավանաբար քերիչ երկարությունը՝ 0,42 մ) կեռ ծայրով, կիսագնդաձև գունազարդ գավաթի բեկոր, ակոսավոր բազալտե երկանք և ցորենի հատիկներ։

---

[1] Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1972, № 2, նկ. 5)։

Ինչպես արդեն ասվեց, միջնադարյան վերոհիշյալ պատից դեպի հյուսիս ընկած մասում, որը փաստորեն մի սենյակ է, միջնադարյան նյութը համատարած էր։ Սակայն այստեղ էլ կային հելլենիստական ժամանակաշրջանի խեցեղենի հատուկենտ բեկորներ։

Ուրարտական պարսպի III և III ու IV որմնահեցերի միջև ընկած հատվածի դիմաց գտնվող քառակուսիներում (6Н, 6І) միջնադարյան ժամանակաշրջանի նյութերը սահմանափակվում էին ջնարակած ու հասարակ խեցեղենի առանձին բեկորներով։ Դրան հակառակ քառակուսու առաջին իսկ շերտերում



Նկ. 1. Արմավիրի միջնաբերդի արևմտյան հատվածը ետուրարտական (հելլենիստական և միջնադարյան) ժամանակաշրջանի կառույցների հատակագծով։

երևան եկան անտիկ ժամանակաշրջանի նյութեր, որոնցից ուշագրավ են գնդաձև անոթը՝ խողովակաձև սրածայր քթով ու հորիզոնական կանթով, ապակյա անոթի բեկորը՝ շրթի տակ զուգահեռ ոչ խորը ակոսներով։ Մոտ 0,80 մ խորության վրա բացվեց կանոնավոր շարվածքով չեչաքարե պատի ներքնամասը, ընդհանուր ուղղությունը հյուսիսից-հարավ (հաստությունը՝ 1 մ, պահպանված բարձրությունը՝ 0,40 մ)։ Այն գտնվում է ուրարտական պարսպից մոտ 3,50 մ հեռավորության վրա և պարսպի հիմքերի համեմատությամբ մոտ 1,30 մ բարձր է։ Նորահայտ պատի մակարդակից ներքև քառակուսիների շերտը շարունակում էր մնալ հին հայկական, իր բնորոշ նյութերով հանդերձ։ Այնտեղ գտնվեցին ալաբաստրոնաձև անոթների, ֆիալա-լամպանակների, խաչազարդ թասերի, ծորակավոր անոթների, տափաշշերի, սև փայլեցրած և գունազարդ խեցեղենի, նորախեցի կավանոթների բեկորներ, ապակյա անոթի բեկոր, երկաթե իրեր, կոթառավոր տեգի ծայրեր, երկթևանի նետասլաք՝ մեջտեղում հաստ շղով, դաստապանի բեկոր՝ դամերի հետքերով։

Հայտնաբերվեցին նաև գունազարդ կավանոթների բեկորներ. ծորակավոր մի անոթի վերնամասում բաց ֆոնի վրա՝ սև և գորշ գույնի ներկով արված են

գծային և թեփուկավոր զարդեր, տափաշշի բեկորները պատված են զիգզագաձև և եռանկյունաձև վառ կարմիր զարդերով։ Դրանց հետ հայտնաբերվեցին սև փայլեցրած անոթի բեկորներ՝ մեկը հորիզոնական և ուղղահայաց ակոսներով, ինչպես նաև վաղ հայկական ժամանակաշրջանի սափորներ հիշեցնող միականթանի սափորի վերևի մասը։ 6I քառակուսում գտնվեց ուրարտական տուֆե խարիսխ։

5H և 5I քառակուսիներում շերտը ավելի բարակ լինելով հանդերձ՝ հարուստ էր անտիկ ժամանակաշրջանի նյութերով։ Հայտնաբերված ոսկորների առատությունը ևս խոսում է ամրոցի այս հատվածում ծավալված բուռն կյանքի մասին։ Աչքի են ընկնում կենդանակերպ անոթների բեկորները. մեկը՝ խոյագլուխ, մյուսը՝ ձիագլուխ։ Ուշադրության արժանի է նաև ոչ լրիվ պահպանված գունազարդ սափորը, որի ուռուցիկ իրանը զարդարված է նեղ, խորակոս գոտիներով, խաչաձև ու վարդյակաձև դարչնագույն նախշերով։

5I քառակուսում բացվեց մի նոր, ուրարտական տիպի խարիսխ, նույնպես տուֆից, իսկ 6H և 6I քառակուսիների սահմանում՝ հյուսիսից-հարավ ընկած մի պատի հիմք (5,60 մ երկարությամբ)։ Ուրարտական պաշտպից այն հեռու է մոտ 7 մ և նրա համեմատությամբ թեք է։ Ուշագրավ է այն, որ նորահայտ պատի հյուսիսային ծայրում, շարքի մեջ, կողքի վրա դրված էր ուրարտական բազալտե մի մեծ խարիսխ։ Պատի հաստությունը, քարերի մշակման աստիճանը, երկրորդական օգտագործման ուրարտական խարսխի առկայությունը, խոսում են այն մասին, որ պատը ետուրարտական ժամանակաշրջանին է պատկանում։ Այս մասին են վկայում նաև շրջակայքում գտնված խեցեղենը, քարե և ապակե անոթների բեկորները։

1971 թ. պեղվեց դեռևս 1962 թ. բացված որմնահեցի առջև ձգվող տարածությունը (6, 7J քառակուսի)։ Այստեղ գտնվեց մի խարիսխ, որը տեղից խախտված ու շուռ տված էր երևում։ Բացվեց վառված շերտ՝ հարուստ ոսկորներով, խեցեղենով, կավից և գետաքարերից կազմված հատակի մնացորդներով։

Չնայած որմնահեցի քարերի վատ պահպանվածությանը, պարզ դարձավ, որ անտիկ ժամանակաշրջանի համար բնորոշ նյութերով հարուստ տվյալ շերտը (ֆիալա-ջրմպանակի բեկոր հատակին տերևանման ներճկումներով, հաստապատ թաս կոպիտ արտաքինով, երկաթե դանակի սայր և դաստապան՝ գամերով հանդերձ, ձողանման տեգի ծայր) իջնում է նրա հիմքերից ներքև։

Հելլենիստական ժամանակաշրջանի նյութ գտնվեց նաև նորահայտ պարըսպից ներս ընկած տարածքում (9, 10K, L քառակուսի), ուր շերտը բավականին խառն էր։ Միջնադարյան և ուրարտական իրերի կողքին ուշադրության արժանի են անտիկ ժամանակաշրջանի նյութերը (կիսագնդաձև գունազարդ գավաթի բեկոր և հավանաբար ներմուծված ամֆորայի կանթ)։

1971 թ. պեղումները նոր տվյալներ տվեցին ետուրարտական, առաջին հերթին հելլենիստական ժամանակաշրջանի ամրոցի տվյալ հատվածի կառուցապատման մասին։ Դա ունի մեծ նշանակություն, քանի որ հնարավորություն է տալիս հնագիտական նյութը կապել շերտագրական տեսակետից ևս հաստատապես ետուրարտական ժամանակով թվագրվող ճարտարապետական մնացորդների հետ։ Սակայն նրանց հատվածավորված վիճակը թույլ չի տալիս դրանք դնել մի ամբողջականության մեջ։ Տարբեր ժամանակներում կատարված շինարարական աշխատանքների հետքերը պահպանվել են տարբեր



Նկ. 2. Ուրարտական պատի, Հելլենիստական ժամանակաշրջանի սակարդակի և միջնադարյան պատի կտրվածք (քառակուսի 7D)։



Նկ. 3—4. Հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր (քառակուսի 7D)։



Նկ. 5. Ուրարտական և ուշ հելլենիստական ժամանակաշրջանի պատերի կտրվածք (քառակուսի 6Н)։



Նկ. 6. Հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր (քառակուսի 6II, 6I)։
Նկ. 7. Հելլենիստական ժամանակաշրջանի նյութեր (քառակուսի 5I, 6I)։

մակարդակների վրա, որն ավելի է դժվարացնում շերտի մասին ամբողջական պատկերացում կազմելը։ Իրար հարևան քառակուսիներում (6Н և 5Н) բացված պատերը թեև, ամենայն հավանականությամբ հելլենիստական միևնույն դարաշրջանին են պատկանում, այդուհանդերձ խիստ տարբեր մակարդակների վրա են գտնվում։ Մեկը, որի շարի մեջ օգտագործվել է ուրարտական խարիսխը, դրված է հողի վրա, ուրարտական պատի հետ համարյա թե մի մակարդակի վրա, մյուսը շատ ավելի բարձրադիր է և անցնում է, գոնե մասամբ, ուրարտական նույն պատի վրայով, որից բաժանված է հողի հաստ շերտով։ Առաջին պատը կտրող է վերաբերվել եռուրարտական ժամանակաշրջանի կառուցապատման նախնական փուլին (IV—III դդ.), մյուս պատը՝ նրա ավելի ուշ փուլին (II—I դդ.), թեև դրանց հետ կապված հնագիտական նյութերի միջև առանձնակի տարբերություն չի նկատվում։ Մի մակարդակ էլ դիտվում է 7D քառակուսում՝ կապված դետաքարերից կազմված հատակի հետ, որը ուրարտական պատի վրա է նստած և որը ավելի հին է թվում, քան 6Н բարձրադիր պատը, բայց ավելի ուշ է կառուցվել, քան խարիսխով պատը։ Այս քառակուսու առանձին շերտերի բացարձակ թվագրմանը կարող են նպաստել գետաքարերից կազմված, հատակի մակարդակից ներքև գտնված նյութերը, որոնք, չնայած իրենց խորությանը, հելլենիստական ժամանակաշրջանին են վերաբերում։ Այստեղ գտնված եռաթև պոչուկավոր երկաթե սլաքը, ջնարակած խեցեղենի և ներմուծված նրբախեցի կավանոթների բեկորները կարող են մ. թ. ա. II—I դդ. թվագրվել։ Նման թվագրումը ամենևին էլ պարտադիր չէ հելլենիստական դարաշրջանի ամբողջ ամրոցի ստորին շերտերի համար ընդհանրապես, քանի որ մի շարք հանգամանքներ խոսում են այդ շերտերի ավելի վաղ թվագրման օգտին (առնվազն մ. թ. ա. III դ.)։

Միջնաբերդի արևմտյան մասի մ. թ. ա. III—I դդ. կացարանների բնակիչներին ընութագրող նյութերը, առաջին հերթին հենց կացարանները, ցույց են տալիս, որ բնակիչները պատկանել են ոչ ունևոր խավին։ 1971 թ. պեղումների ընթացքում գագաթի շենքի մոտ գտնված ոսկե զարդը՝ օղակով կլոր կոճակ, որևէ էական փոփոխություն չի մտցնում նման պատկերացումների մեջ։

Դատելով հնագիտական նյութից, բնակչության զբաղմունքներից մեկը երկրագործությունն է եղել։ Այդ մասին են խոսում անտիկ ժամանակաշրջանին խիստ բնորոշ բազալտե ակոսավոր աղորիքը, երկաթե մանգաղի բեկորը և ցորենի վառված հատիկները։ Հետաքրքրություն է ներկայացնում տապարաձև երկաթե գործիքը, որը ամենայն հավանականությամբ կապված է հաց թխելու արարողության հետ։ Անտիկ ժամանակաշրջանի օջախ-թոնիրներ, պակաս խոշոր, քան միջնադարյանները և առանց ակի, առաջին անգամ դասնվել են Արտաշատում (1972 թ. աշնանը), և վերոհիշյալ գործիքի հետ նրանց ունեցած կապը խիստ հավանական է թվում։ Նրա կեռ ծայրով հավանաբար տաք օջախից պատրաստ հացերն էին դուրս բերվում, իսկ լայն բերանով քերվում էին նրա պատերն ու հատակը։

Այժմ առանց տատանվելու կարելի է պնդել, որ Արմավիրը հելլենիստական ժամանակաշրջանում հանդիսացել է խեցեգործության կարևոր կենտրոն, թեպետ այդ արտադրության հետ կապված հետքեր ցարդ չեն գտնվել։ Սակայն խեցեղենի առատությունը, ձևերի բազմազանությունը և հարստությունը, կավի ընդհանրությունը և միևնույն ժամանակ տարբերությունը բերո-

վի իրերի կավից, թույլ են տալիս խոսելու Արմավիրում կազմակերպված խեցեղենի արտադրանքի մասին։

Առանձին քառակուսիների պեղումների նկարագրությունից երևաց, թե ինչքան հաստատուն տիպեր ու ձևեր կան Արմավիրում, որոնք կրկնվում են տարեցտարի (թաս-ըմպանակներ, տափաշշեր, գավաթներ, ալաբաստրոնաձև անոթներ, ճրագներ և այլն)[2]։ Նրանց կողքին երևան եկան և նոր ձևեր (գնդաձև անոթ խողովակաձև քթով, հաստապատ թաս) և խորը կոնք՝ նման Արտաշատի նյութերին։ Միկանթանի սափորի վերին մասը՝ գլանաձև վզով և հեռացող շրթերով, հիշեցնում է Ջրառատի, Աթարբեկյանի, Կարմիր բլուրի մ. թ. ա. V—IV դդ. թվագրվող նման անոթները։

Բացառված չէ նաև, որ Արմավիրում այս և նախորդ տարում գտնված բրոնզե ոլորուն ապարանջանները նույնպես կարող են վաղ հայկական ժամանակով թվագրվել (մ. թ. ա. V—IV դդ.), թեպետ հայտնի է նրանց առկայությունը և վաղ հելլենիստական ժամանակաշրջանում, ինչպես երևում է Գեղադիրի դամբարանային նյութի օրինակից։

Խեցեղենի գունազարդման մոտիվների մեջ առկա են նոր ձևեր։ Մի քանի կավանոթների (սափորներ, ծորակավոր անոթներ) վրա հանդիպող զարդերը (վարդյակաձև, խաչաձև, շեղանկյունաձև, թեփուկավոր) տարբերվում են Արմավիրում զանգվածաբար հանդիպող գունազարդ խեցեղենից։ Դրանցից մի քանիսը հիշեցնում են փոքրասիական ուշ փռյուգիական գունազարդ խեցեղենի զարդամոտիվները[3]։

Արմավիրի ետուրարտական շերտերում հանդիպում են սև փայլեցրած կավանոթների բեկորներ՝ զարդարված կուտաձև փորվածքներով, հորիզոնական և ուղղահայաց ակոսներով, զիգզագաձև և շրջակենտրոն ներճկումներով կամ փորագրումներով։ Բոլորն էլ հիշեցնում են նախնադարյան համայնական ժամանակաշրջանի (երկաթի, բրոնզի և նույնիսկ վաղ բրոնզի) նույնատիպ զարդերով հարդարված սև մակերեսով խեցեղենը։

Ջնարած իր հնատիպ տեսքին, այս խեցեղենը գտնվում է շերտագրական ստույգ միջավայրում՝ հելլենիստական ժամանակաշրջանի նյութերով հանդերձ։ Նման երևույթի կարելի է հանդիպել նաև Արտաշատում, որտեղ մ. թ. ա. II—I դդ. շերտում հանդես են գալիս նույն հնատիպ կավանոթների բեկորները։ Առաջին անգամ չէ որ, բրոնզեդարյան կամ երկաթի դարի նյութական մշակույթի որոշ երևույթներ հարատևելով, հասնում են մինչև հելլենիստական և ավելի ուշ ժամանակաշրջանը։

Ջնարակած խեցեղենի առկայությունը Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի հուշարձաններում վերջին տարիներին դարձել է սովորական։ Գառնիում այն թվագրվում է մ. թ. ա. II—I դդ., Սիսիանում գտնվել է մ. թ. ա. I դ. դամբարանում, Արտաշատում հանդիպում է մ. թ. ա. II—I դդ. շերտում։ Արմավիրի ջնարակած խեցեղենը իր դեղին կամ կարմրավուն կավով, ջնարակի բաց կապտավանաչավուն գույնով և խամրած տեսքով նման է Հայաստանի այդ ժամանակաշրջանի նույնատիպ խեցեղենին և պատկանում է

[2] Г. А. Тирацян, Древнеармянская керамика из раскопок Армавира (опыт классификации и датировки) (*«Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, տախտ.* I, II, III)։

[3] K. Bittel, H. Güterbock, Neue Untersuchungen in der hethitischen Hauptstadt. Abhandlungen der preussischen Akademie der Wissenschaften, Berlin, 1935, *տախտ. 15, 4։*

հին ;նարակած խեցեղենի առևելյան խմբին՝ վերոհիշյալ հատկանիշներով տարբերվելով արևմտյան նմուշներից։

Հելլենիստական ժամանակաշրջանի կենդանակերպ կավանոթներ հանդիպում են Արմավիրում (խոյ, արջ)։ 1971 թ. գտնվածները (ձի, խոյ), որոնք նախորդներից տարբերվում են կարմրավուն արտաքինով, վկայում են նշված ժամանակաշրջանում Հայաստանում կենդանակերպ անոթների տարածման մասին։

Հատուկ ուշադրության են արժանի բաց գույնի, մաքուր և միատարր կավից լավ թրծված նորբախեցի անոթների մասերն ու բեկորները (ամֆորայի կանթ, սրվակի վիզ՝ սրճագույն լաքի հետքերով, սրվակի ոտք և իոանի մաս՝ նուրբ, ոչ խորը հորիզոնական գիծ-ակոսներով, գլանաձև ծորակ, փոքր թասի

Նկ. 8. Հելլենիստական ժամանակաշրջանի պատի հետքեր և ուղղանկյուն բարձ խարիսխ (քառակուսի 5Н, 1)։

տափակ հատակ, սրճագույն ներկով պատած նորբախեցի անոթի բեկորներ)։ Սրանք բոլորը կամ գերակշռող մասը հավանաբար դոսից է բերված։ Դրանց պատրաստման կենտրոնների և թվագրման ստույգ որոշումը մեծ նշանակություն կունենա Արմավիրի հելլենիստական շերտի ուսումնասիրման համար։

Ուշագրավ են շերտում գտնված ապակյա բեկորները, որոնք հելլենիստական ապակեգործության նմուշներ են։ Ակոսներով հարդարված բարակ պատերով նման թասերի բեկորներ հայտնի են Արտաշատից մ. թ. ա. II—I դդ. շերտում։

Հայտնաբերված մետաղե իրերի թիվը բավականին մեծ է։ Հանդիպում են զենքեր (նիզակի ծայր, տեգի ծայրեր, նետասլաքներ) և գործիքներ (քե-

---

[4] И. Д. Марченко, Об античных глазурованных сосудах из музеев СССР. Краткие сообщения института Археологии СССР, выпуск 128, 1971.

րիչ, մանգաղ, դանակներ)։ Սրանք բոլորը երկաթից են՝ բացառությամբ դանակների դաստապանների բրոնզե թերթիկների, որոնք ամրացվում էին երկաթե գամերով։

Պեղված քառակուսիների ստորին շերտերը տալիս են ուրարտական ժամանակաշրջանի մնացորդներ (շենքերի հիմքեր, խեցեղեն)։ Շերտագրական հարաբերությունը նրանց հաջորդած հին հայկական նյութի հետ յուրովի է։ Բազմաթիվ են այն դեպքերը, երբ հին հայկական ժամանակաշրջանի նյութերը գտնվում են ուրարտական շերտագրական մակարդակի վրա կամ ներքև։ Սա բացատրվում է հին հայկական ժամանակաշրջանում նշված տեղամասի արդյունավետ յուրացմամբ, երբ բնակիչները իրենց նիստուկացը կազմակերպելիս, իջել են մինչև ուրարտական շենքերի հիմքերը։

Դեռևս նախորդ տարիներին պարզվել է, որ միջնաբերդի արևմտյան երկու պարիսպների միջև ընկած տարածությունը հաստ պատերով բաժանված է եղել երկարավուն հատվածների, մի պարսպից մյուսը (արևելքից-արևմուտք)։ Դրանցից չորսի հիմքերը որոշ չափով հայտնի դարձան (լայնությունը՝ 2,80 մ, պահպանված բարձրությունը՝ 0,40 մ)։ 1971 թ. հնարավոր եղավ հատկապես արևելյան մասում բացել դրանց երկարությունը հավաստող նոր հատվածներ, ինչպես նաև պարզել հին պարսպին միանալու հանգամանքները։

Այդ առթիվ հնարավոր եղավ ճշտել նաև շերտագրական մի շարք առանձնահատկություններ՝ կապված 7D, 6H և 5H քառակուսիների հետ։ Ամենուր լավ երևում է, թե ինչպես ավելի ուշ ժամանակաշրջանի՝ մի դեպքում անտիկ (6H), մյուս դեպքում՝ անտիկ և միջնադարյան շինարարական շերտերը (7D) նստած են ուրարտական վերոհիշյալ պատերի՝ առաջինի և երրորդի արևելյան ծայրերի վրա։ Դա վկայություն է այն մասին, որ հին հայկական ժամանակաշրջանում այդ պատերը, ավելի ճիշտ նրանց աղյուսաշեն վերնամասը արդեն գոյություն չուներ։ Այդ քառակուսիների կտրվածքները լավ ցույց են տալիս անտիկ ժամանակաշրջանի հատակի ու պատի և միջնադարյան պատի դիրքը ուրարտական պատի հիմքերի վրա։ Արդեն նշեցինք, որ ինչ վերաբերում է հին հայկական ամենավաղ շերտերին, ապա նրանք գտնվում են ուրարտական վերոհիշյալ պատերի մակարդակին կամ նույնիսկ նրանցից էլ ցածր։ Այդ հատկապես երևում է նաև չորրորդ որմնահեցին հարող քառակուսում, ուրարտական պարսպի և նրա հիմքերի համեմատությամբ հելլենիստական շերտի դիրքից։

Ուշագրավ է, որ ուրարտական երկու պարիսպների միջև ընկած տարածությունը հնում սյունազարդ է եղել, որի մասին վկայում են իրարից հավասար հեռավորության վրա (5,80 մ—6,10 մ) դրված խարիսխները։ 1971 թ. գտնվեցին վեց նոր խարիսխներ։ Այժմ կարելի է խոսել հնում նշված տարածությունում գոյություն ունեցած առնվազն երեք շարք սյուների մասին։ Խարիսխների գերակշռող մասը ուրարտական տիպի է (Արին-բերդ, Դումթի բլուր), վերևում թմբուկաձև կլոր, ողորկ, ներքնամասը ավելի լայն, կոպիտ մշակված։ Բացված խարիսխներից մեկը ավելի ցածրանիստ է, տակի մասը քառակուսի, բարակ (6I), մյուսի ներքնամասը չի պահպանվել, ուստի ունի սկավառակի ձև (6J)։ Խարիսխների մի մասը տուֆից է, մյուսը՝ բազալտից (տրամագիծը՝ 0,45 մ—0,68 մ)։

Խարիսխների դասավորությունը և ուրարտական զուգահեռ պատերի հիմքերից նրանց տարբեր հեռավորությունը վկայում են, որ նրանք կանգնեցված

են եղել, երբ այդ պատերը, ավելի ճիշտ՝ նրանց վերնամասերը այլևս գոյություն չունեին։ Նրանք հավանաբար կոչված էին փոխարինելու այդ պատերին, ապահովելով ծածկը երկու պարիսպների միջև ընկած տարածություններում, հավանաբար ուշ ուրարտական ժամանակաշրջանում։ Ուրարտական պատերի ու խարիսխների շրջապատում կան նաև ուրարտական խեցեղենի սակավաթիվ նմուշներ, կարմիր փայլեցրած սափորների բեկորներ, փորագրված նշանով ամբողջական կանթ և այլն։

Ուրարտական շերտ կա նաև արևմտյան նորահայտ պարսպից ներս, որտեղ դեռևս նախորդ տարիներից հայտնի պատերը շարունակվում են, անկյուն տալիս, նոր սենյակներ կազմում։ Այստեղ գտնված նյութերից ուրարտական ժամանակաշրջանի են ճրագի բեկորը, կարմիր փայլեցրած թասերի ու սափորների բեկորները, օբսիդիանե պոչուկավոր նետասլաքը։ Գագաթի շենքի հյուսիսային մասում բացվել են հարթեցված ժայռի և ինչ-որ շարվածքի հետքեր՝ կապված, հավանաբար, շենքի նախնական (ուրարտական) վիճակի հետ։

Չնայած բազմաշերտ բնույթին և ուսումնասիրության հետ կապված դժվարություններին, Արմավիրը քայլ առ քայլ բաց է անում իր ընդերքում պահպանված գաղտնիքները։ Հետագա աշխատանքները պարզություն կմտցնեն Արմավիրի պատմության տարբեր ժամանակաշրջանների և նրանցից ամենահետաքրքիրներից մեկի՝ հելլենիստականի մեջ։

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАБОТЫ В АРМАВИРЕ

Г. А. ТИРАЦЯН

Резюме

Продолжавшиеся в 1971 г. раскопки Армавира дали весьма ощутимые результаты, позволяющие охарактеризовать разные периоды жизни крепости.

Как и в прежние годы, особое внимание привлекают к себе данные древнеармянского времени. На западном участке крепости были обнаружены остатки жилищ, стратиграфическая картина которых недвусмысленно указывает на их послеурартское, эллинистическое происхождение, что подтверждается также данными материальной культуры.

Анализ раздобытого здесь вещественного материала позволяет выделить существование ряда отраслей хозяйства древнего населения Армавира—земледелия, гончарства, металлопромышленности.